ՓՈՒՆՋ

ԹԻՒ 1165 — ՁՈՐԵՔՇԱԲԹԻ — 1877 ԱՊՐԻԼ 6

ԱԶԳԱՅԻՆ

Բաւական օրեր անցան Զատկի տօնին վրայ. բայց մեր քաղաքական ու կրօնական ժողովներն դեռ չկրցան մեծագոյն մասն ունենալ և ազգային խնդրոց վրայ խորհրդակցիլ։ Կրօնականժողովն ալ՝ որ սովորաբար երկուշաբթի օրերը նիստ կընէ, այս երկուշաբթի մեծագոյն մասն չունեցաւ, և անդամներէն մէկ քանին ի զուր սպասելէն յետոյ, մեկնեցան։

Գաւառական բազում խնդիրներ կան արդէն. հարկաւ վերջին օրերս ուրիշ խընդիրներ ալ երեւան ելած են. թո՛ղ Պոլսոյ այլեւայլ թաղերուն մէջ յուզուած նորանոր խնդիրներն, որոց պատճառաւ թաղական հաստատութիւնք կվնասուին, և որք անշուշտ քաղաքական ու՝ կրօնական ժողովոց պիտի ներկայանան։ Հետեւաբար, անհրաժեշտ հարկ է բաւական համարիլ այսչափ դադարն, և դորձի սկսիլ օր յառաջ։ Լսեցինք, թէ առաջիկայ ուրբաթ աւուր համար քաղաքական ժողովոյ անդամք միայն հրաւիրուած են. մինչդեռ առաւել խառն ժողովոյ դումարման պէտք կայ. որովհետեւ՝ ինչպէս նախորդ թերթով ալ դիտեցինք՝ տակաւին անլոյծ մնացած է Կիլիկիոյ կաթողիկոսական խնդիրը, և տակաւին մեր բիւրաւոր աղգայինք անոք ու անհովիւ մնացած՝ թշուառութենէ ի թշուառութիւն կգլորին։ Պատրիարքարանի արձանագրութիւնք քա՛ջ իսկ կվկայեն, թէ Կիլիկիոյ ներկայ թշուառութեանց սկզբնապատճառն ո՛վ է, և թէ՝ ո՛րչափ ծանր պատասխանատուութեան տակ կմնայ կեդրոնական վարչութիւնը, ա՛յսչափ երկարաձգելով այդ վիճակին բարեկարգութեան ամենակարեւոր գործը։

Այս խնդրոյն վրայ, մասնաւորապէս ամեն. Ս. Պատրիարք Հօր ալ ուշադրութիւնը հրաւիրելէն յետոյ, միանգամայն կաղաչեմք Նորին բարձր սրբազնութեան, որ բարեհաճի նախագահել ժողովոյ. նաև՝ շնորհ ընէ շաբթուն դէթ քանի մը օրերը Պատրիարքարան անցուցանել, իրեն ներկայանալ ուզողներուն դիւրութեան, և աղգային ընթացիկ գործոց անյապաղ կարգադրութեան համար։

Շատերն իրաւամբ կյիշեցուցեն մեզ՝ ժամանակաւ մեր հրապարակային անդադար գանդատներն, զոր երբած եմք՝ Պատրիարքին իւր պաշտօնատունէն օրերով բացակայ գտնուելուն համար։

Այս խնդիրն կմատուցանեմք Ս. Պատրիարք Հօր, անտարակոյս ըլլալով թէ լրագրաց անկեղծ ու բարեմտական դիտողութիւնները լսել կհաճի, աղգային պաշտօնի վրայ գտնուող չա՛տ մը անձերէ աւելի։

Դատրգիւղէն։

. . . Խմբագիր

Արամեան վարժարանի հոգաբարձութիւնս սիրով կընդունի այն դիտողութիւնները զորս կանոնաւորապէս կհաճին ներկայացընել ուսումնասէր աղգայինք. եւ այս նպատակաւ դիտողութեան մասնաւոր տեղը մը եւս յատկացուցած է վարժարանին մէջ։ Ուստի հաճեցէք Ձեր պատուական Թերթին վաղուեան թուոյն միջոցաւ հրաւիրել զանոնք որք բարեփոխութիւն մը կառաջարկեն, դալ ի խորհրդարան վարժարանիս եւ նոյն տեղին մէջ նշանակել իրենց դիտողութիւնքը։

ի դիմաց հոգաբարձութեան

1/13 ապրիլ 1877 — Գաբ. Նոբպարեանէան

Գատրգիւղի վարժարանին պատուարժան Հոգաբարձութեան այս աղգարարութիւնը մէկ կողմանէ դիւղին աղգայնոց ուշադրութեան կմատուցանեմք. իսկ միւս կողմանէ պարտ կհամարիմք մեզ՝ խնդրել Հոգաբարձութենէն, որ առանց սպասելու ուղղակի դիտողութեանց՝ բարեհաճի անդամ մը ինքնին հետաքննել, թէ արդարև դիտողութեան և ուղղութեան արժանի պարագաներ տեղի ունեցա՞ծ են, ի՞նչպես վարժարանին ընթացից։ Կյուսամք, թէ մեր այս խնդիրը լսելի կըլլայ, ընդունելով որ լրագրութիւնն ալ հասարակաց դիտողութեանց և այլ յայտարարութեանց համար օրինաւոր միջոց մ'է։

Կրնայինք այս առթիւ նշանակել մեղի հաղորդուած ինչ ինչ դիտողութիւններ. բայց դարձեալ ղանց ըրինք՝ վստահ ըլլալով թէ հրապարակային այսչափ ակնարկութիւն ալ բաւական է Հոգաբարձութեա՛ն մը համար, որոյ միակ նպատակն է՝ վարժարանին ուղղութիւնն ու յառաջադիմութիւնը, և որ սրտի մտօք փոյթ կտանի՝ իւր ստանձնած պաշտօնն ու պարտաւորութիւնը ըստ արժանւոյն կատարելու համար, առանց ուրիշ չա՛տ մը հոգաբարձութեանց պէս։ այս կամ այն անձը, թէև անարժան ըլլայ, թէև ապիկար, նիւթապէս շահել ուզելու՝ ի՞նչպես աղգային հարիւրաւոր մանկտւոյն։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Տակաւին երեւան չելաւ՝ Բ. Դրնէն մերժեալ դաշնագիրն ստորագրող տէրութեանց, և մասնաւորապէս Ռուսիոյ վերջնական պատասխանը, որուն յանհամբերս կսպասուի ժամէ ի ժամ։ Առայժմ դեռ մասնաւոր հեռագրոց և դուշակութեանց լաբիւրինդոսին մէջ կդեգերի աշխարհ։ Եւրոպիոյ մէկ ծայրէն միւս ծայրը մօտալուտ պատերազմի մը արհաւիրք տիրած, խաղաղութեան յոյսերը գրեթէ իսպառ չնչուած, և դրամատունք՝ վաճառատունք և հասարակաց գործառնութիւնք վեր ի վայր և մրրկածուփ վիճակի մէջ են։ Աւստրիա, կըսեն, դեռևս ուզեր է փորձ մը փորձել՝ իրաւախոհութիւն դոյացնելու, և խնդրոյն խաղաղութեամբ վախճան տալու համար. սակայն Անդղիա այսչափ ապարդիւն բանակցութենէ յետոյ տակաւին բանակցութեան մտնել աւելորդ կհամարի։

Ինչպէս կանխաւ դրած էինք շաբաթ օրը, Գարատաղի պաշտօնակալք երէկ մեկնեցան ունայնաձեռն։ Ասոնք ուղղակի Զէթինճէ առ Նիքիթա իշխանն չեն երթար, այլ Քիշնէվ՝ ուր, հեռագրաց նայելով, ռուսաց Աղեկսանդր կայրը կհասնի այսօր կամ՝ վաղը, զօրքը աչքէ անցունելու համար. ասոնք ի Քիշնէվ կայսեր հետ տեսնուելէն և անշուշտ նոր հրահանգներ ստանալէն յետոյ՝ Վիէննա պիտի անցնին և ապա ի Զէթինճէ։

Մայրաքաղաքիս լրագրաց ոմանք, երկու օր յառաջ յատկապէս եկած շոգենաւներով ճամբայ հանեցին մայրաքաղաքիս ռուս գործակատարն, հիւպատոսքն և այլ պաշտօնական անձինքն, և գերմանական դեսպանատան խնամոց ենթարկեցին՝ Պոլսէն զատուիլ չուզող հպատակներն։ Յետոյգ է որ երկու շոգենաւներ եկած են. սակայն դեռ մեկնած չեն նշանակեալ անձինքն, և կկարծուի թէ վերջնական հրամանի կսպասեն։

Մինչդեռ, այս ծանրակշիռ վիճակին մէջ կտեսնուի խնդիրը, և մինչդեռ եւրոպական լրագրութեան կարևորագոյնք անհրաժեշտ և խիստ մնտալուտ համարելով պատերազմը՝ բոլոր պատասխանատուութիւնք Ռուսիոյ կառավարութեան վրայ ամփոփելու համար՝ խընդրոյն սկիզբէն մինչև ցարդ տեղի ունեցած բոլոր պարագաներն ու պատ ի պատ դարձուածները քննութեան ու խորհրդածութեան բովէ անցունելու զբաղած են, տակաւին նորագոյն հեռագիրք խաղաղութեան յոյսեր կընծայեն մեզ, թէև ընդ աղօտ, ծանուցանելով թէ կառավարութիւնք խորհուրդ կուտան Ռուսիոյ՝ խաղաղութեամբ վախճան տալ խնդրոյն, և 1856ի փարիզեան դաշնադրութիւնը կոյս պահել։

Զգիտցուիր, թէ այս հեռագիրք ո՛րչափ կարևորութեան արժանի են, և թէ կարելի՞ է որ այսուհետև արդիւնք մ'ունենան այսպիսի խորհուրդներ ու աղդարարութիւններ, քանի որ խնդրոյն տէր եղող երկու կողմերն ալ՝ յանուն պատուոյ և իրաւանց՝ ոտք ելած են, և լսելու ու խօսելու ժամանակն անցած համարելով՝ զինուորական ահագին պատրաստութեանց զբաղեալ են ամենայն փութով։

Տեսնե՛նք թէ արդարև մե՞րձ են, այս երկարժամանակեայ բազմակնճիռն հանելուկին լուծման օրերը։

Ռումանիոյ իշխանութիւնն ալ այս օրերս Ծանր տագնապի մէջ է. որովհետև եթէ պատերազմ բացուի, առաջին ասպարէզը Ռումանիա պիտի ըլլայ։ Այս իշխանութեան պաշտօնատարք անդադար խորհրդակցութեան կնստին։ Պուքրէշէն ապրիլ 3 թուով հեռագրի մը նայելով՝ որոշեր են ո՛րևէ ձեռնարկութիւն չընել առանց ազգային ժողովոյ հաւանութեան։ Միւս կողմանէ կըսուի, թէ Ռումանիոյ իշխանութիւնը կասկածելով որ ռուսական զօրքը Բրուդն անցնելուն պէս, օսմանեան զօրքն ալ Գալաֆաթ կանցնի, ամրացուցեր է այն կողմը, և գնդապետ մը յանձն առեր է մինչև մէկ ամիս, այն է՝ մինչև ռուսական զօրաց հասնիլը, դիմադրել Վիտինի օսմանեան զօրաբաժնին։ Այս լուրը տուող լրագիրք կդիտեն, թէ այդ գնդապետն չէ՛ թէ մէկ ամիս չը կրնար տոկալ, այլ թնդանօթի առաջին որոտմամբն բնաջինջ կըլլայ։

Ի՛նչ որ ալ ըլլայ, հուսկ ուրեմն երևան կելնէ, թէ Ռումանիոյ իշխանութիւնը՝ մինչև ցարդ անդադար ըրած չեղոքութեան յայտարարութեանցն հակառակ, այսօր Ռուսիոյ նպաստաւոր դիրքի մը մէջ կդտնուի, միշտ Ռուսիոյ պաշտօնատարաց հետ բանակցելով, և ռուսական բանակին շարժման և փոխադրութեանց համար դիւրութիւններ ընծայելով։

Սերվիոյ գալով՝ ժողովուրդը յուզեալ վիճակի մէջ է, և իշխանութեան դէմ մեծապէս դժգոհ։ Երկիւղ կայ, թէ ի մօտոյ ներքին յեղափոխութիւն մը՝ նորանոր աղետից դրներ պիտի բանայ այս երկրին մէջ, որ արդէն մեծաւ մասամբ այրեցաւեր եղած է այսօր վերջին դըժբաղդ պատերազմին պատճառաւ։ Շատերը կկասկածին, թէ երբ Ռուսիոյ հետ պատերազմ բացուի՝ այս իշխանութիւնն ալ դարձեալ զէնք պիտի առնու ընդդէմ օսմանեան զօրաց, կարծելով թէ այս երկրորդ անգամ կրնայ յաջողիլ և իւր նըպատակին հասնիլ։

Գարատաղի վիճակն յայտնի է։ Այս կողմէն եկած տեղեկութիւնները՝ պատերազմական պատրաստութեանց կվերաբերին. և Գարատաղ կյուսայ թէ այս անգամ ալ յաջողութիւնը բոլորովին իւր կողմը պիտի ըլլայ, և զինուց շնորհիւ պիտի հասնի նպատակին, զոր բանակցութիւնը մերժեց։

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Քաշկարի Էմիրին կողմանէ մայրաքաղաքս եկող պաշտօնակալն, պալատը դնաց երէկ յատկապէս զրկուած կառքերով, և օգոստափառ Սուլթանին ներկայանալով՝ Էմիրին շնորհաւորական ուղերձն ու ընծայները մատոյց։

— Կայսերական Թարգման Միւնիր պէյ և անգղիական դեսպանատան գըլխաւոր Թարգմանն այսօր Զանագդալէ կուղևորին, անգղիական առժամանակեայ դեսպան Պ. Լէյերտը դիմաւորելու համար։

— Լա Թիւրքի երէկ իբրև ստոյգ դըրած է, թէ Բ. Դուռը չէ ընդուներ որ պատերազմ բացուած ժամանակ Թուրքիա գտնուող ռուս հպատակք գերմանական դեսպանատան պաշտպանութեան ներքև գտնուին. այլ՝ կպահանջէ որ Ռուսիա գտնուող օսմանեան հպատակները իրենց հայրենիքը դառնան. և Թուրքիա գտնուող ռուս հպատակներն ալ մեկնին Թուրքիոյ սահմաններէն։

— Պօլսոյ հեռագրութեան և Թղթատարութեան նորընտիր վերատեսուչն սկսեր է, բարեկարգութեան համար նորանոր միջոցներ որոնել։ Առաջարկեր է Բ. Դրան, որ յատկապէս մասնաժողով մը կազմուի, պէտք եղած միջոցներն խորհելու և տեղեկագրելու պաշտօնով։

— Ռուսիոյ կառավարութիւնը՝ Դանուբի և Պուլղարիոյ ընդարձակ աշխարհացոյցները բաժներ է զինուորական հրամանատարաց։

— Վիէննայի լրագրաց մէկը կդրէ, թէ Անգղիոյ կառավարութիւնը 50 շոգենաւ զրկեր է Հնդկաստան, հոն գտնուած մահմետական զօրքն Սուէիշի ճանապարհաւ մայրաքաղաքս փոխադրելու համար։

— Պասիրէթի դրածին նայելով՝ Բէդբրսպուրկէն լուր տրուեր է, թէ Ռուսիոյ մէջ կառավարութեան դէմ աւադանուոյն կողմանէ կազմուած խել մը դաղտնի ընկերութիւններ երևան ելեր են։

— Օտէսայի օսմանեան հիւպատոս խալիլ պէյ՝ կարասեաց մէկ մասն Պօլսոյ համար ճանբայ հաներ է, և ինքն ալ դալու համար հրամանի կսպասէ եղեր։

— Եվրոմէջ պաշտօնատան հաշուական ատեանին անդամներէն Սալիհ էֆէնտի առաջիկայ շաբաթ օրը Իզմիր պիտի ուղևորի, տեղւոյն նախորդ տոմարակալ Շաքիր էֆէնտիի և այլոց վրայ եղած ամբաստանութիւնները քննելու պաշտօնով։

— Պաղտատի նորընտիր կուսակալ Աքիֆ փաշա, երէկ օգոստափառ Սուլթանին ներկայանալէն յետոյ՝ Բ. Դուռը մեծ Եպարքոսին և այլ նախարարաց հետ տեսնուեցաւ, և այսօր ալ կուղևորի իւր պաշտօնատեղին։

— Օգոստ. Սուլթանին գլխաւոր թիկնապահ Մէհմէտ փաշա՝ երկուշաբթի մայրաքաղաքէս մեկնեցաւ, Անատոլիի կայսերական բանակն աչքէ անցուցանելու պաշտօնով։

— Օգոստ. Սուլթանին թիկնապահներէն Թահիր պէյ՝ Բէշթ տարաւ՝ կայսերական Թանգարանէն հունգարացւոց ընծայեալ հունգարական մատեանները։

— Շէյխ-իւլ-իսլամ էֆէնտիի նախագահութեամբ, իւլէմաներէ յանձնաժողով մը կազմուեր է, մայրաքաղաքիս տաճիկ կանանց փողոցները, զբօսավայրերը և տօնի օրեր զգեցած կերպարանաց և այլ ընթացից առաջքն առնելու նպատակաւ։

— Բեդրսպուրկէն դրուածին նայելով՝ որոշուեր է, Իկնաթիէվ զօրավարը այսուհետև դեսպանութեան պաշտօնով Պօլիս չդարձուցեալ։ Արևելեան խնդրոյն կարգադրութենէն յետոյ, Կորչագոֆ իշխանը պիտի հրաժարի, և Լապանոֆ իշխանը պիտի դայ մայրաքաղաքս, որ երբեմն ալ դտնուած է միևնոյն պաշտօնով։

— Պերլինի նախարարք, բաւական խորհրդակցութենէ յետոյ, որոշեր են Պօլսոյ գերմանական դեսպանը առ այժմ ետ չդարձուցանել ներկայ վիճակին մէջ։ Աւստրիա ալ այս մասին Գերմանիոյ համակարծիք կդտնուի եղեր։

— Շա՛տ մը լուրերու մէջ սա՛ ալ կայ, թէ Գերմանիոյ կառավարութիւնը բողոքագիր մը զրկեր է Ռուսիոյ կառավարութեան, Ռումանիոյ սահմանը մտնելու դիտաւորութեանը դէմ։

— Կայսերական կառավարութեան համար 20 հազար հրացան, և 20 միլիոն փամփուշտ բեռնաւորեալ շոգենաւ մը՝ մայրաքաղաքս դալու համար ճամբայ ելեր է Ամերիկայէն։

— Շաբաթ օրը հասարակաց կրթութեան վերատեսչին նախագահութեամբ յանձնաժողով մը կազմուեցաւ, վարժարանաց բարեկարգութեան համար։ Ներկայ էր Սուլթանիյէ վարժարանի տնօրէնն ալ։

— Այս օրերս Մալաթիոյ ժողովրդեան կողմանէ հանրագիր մը տրուեր է Բ. Դըրան, որով կգանգատին տեղւոյն կառավարիչ Մուսթաֆա փաշայի դէմ, ամբաստանելով թէ յետին ստիճան ամբարտաւան ըլլալուն պատճառաւ չկրնար և ո՛չ մէկուն հետ բարուք կենցաղավարիլ, թէ՝ ստորակարգեալ պաշտօնեաները ստէպ կփոխէ, իւր անձնական շահուն համար, թէ՝ ժողովրդէն ողջ դրամ կառնու և թղթադրամի վերածելով կը յանձնէ կառավարութեան դանձուն, և թէ՝ յանցաւոր քիւրտերը չպատժելով, աւելի կը քաջալերէ զանոնք, և հետևաբար հասարակաց անապահովութեան տեղի կուտայ, և թէ՝ ուրիշ անդամներ բողոք եղած է որոնց այս և ուրիշ անհաճոյ և վնասակար ընթացից համար. սակայն լսելի եղած չէ և այսպէս անարդել կշարունակէ։

Այս հանրագիրն հարկաւ ուշադրութեան առնուելով՝ արդար ու անաչառ քննութիւն և տնօրինութիւն պիտի ըլլայ, ի խրատ և ի զգուշութիւն այլոց։ Ամբաստանութեանց եթէ միայն մէկն հաստատուի, բաւական է՝ զանի պաշտօնանկ ընելու և ըստ օրինի պատժոյ ենթարկելու համար։

— Օգոստ. Սուլթանը ընտիր նժոյգ մը ընծայ զրկեց, Դանուբի ընդհանուր հրամանատար Ահմէտ Էյուպ փաշայի։

— Կըսուի, թէ Բեդրսպուրկի և Պօլսոյ պարսիկ դեսպաններն մէկմէկու տեղ պիտի փոխանակեն։

— Հեռագիր մը, եւրոպական լրագրէ մը առնլով գրած է, թէ Անգղիոյ կառավարութիւնը հրամայեր է Միջերկրականի նաւատորմղին, Պէշիքա դառնալ։

— Օրական լրագիրք մանաւանդ վերջին օրերս յաճախ կհարկադրին հերքել վաղը՝ ի՛նչ որ այսօր հրատարակած են։ Այս կարգէն է Լէվքնդ Հերբլտի մէկ լուրը, զոր անկէց առնելով հրատարակեցին ուրիշ շատ մը լրագիրք ալ. այսինքն թէ՝ Բ. Դուռն որոշած է պաշարման վիճակի և զինուորական օրինաց ենթարկել զՊօլիս։ Վագրթ՝ որ ի սկզբան ինքն ալ հրատարակած էր այս լուրը, երէկ ի պաշտօնէ կհերքէ։

— Անգղիոյ կառավարութիւնը Պուլղարիոյ հիւպատոսներուն հրամայեր է՝ անձամբ երթալ քննել Դանուբի և Լիտրնէի կողմանց պուլղարաց ներկայ վիճակը։

կըսուի, թէ այս քննութիւնը ուրիշ կառավարութիւնք ալ ապսպրած են իրենց հիւպատոսներուն։

— Ռուսաց կայսեր թիկնապահներէն մին այս օրերս Վիէննա անցեր է. սակայն ի՛նչ պաշտօնով ըլլալն դեռ յայտնի չէ։

— Օտէսայէն հեռագրուած է՝ Պէնտէրի աւստրիական հիւպատոսարանի գործակալներէն մէկուն բանտարկուած ըլլալն, ռուսական զօրաց ընթացից վրայ դուրս տեղեկութիւն հանած ըլլալուն համար։

—

Պելճիքացի մը տեսակ մը թնդանօթ հնարեր, և օսմանեան դեսպանին մատուցեր է տեղեկագրով մը՝ յորում կծանուցանէ թէ պատերազմի ժամանակ այս թնդանօթն թշնամւոյն զօրաց աչքերը կկուրցնէ։ Այս նոր գիւտը Պօլիս ղըրկուեր, և բժշկական վարժարանին քննութեան ու փորձին յանձնուեր է. սակայն դեռ որոշում մը չէ տրուեր՝ փորձը, ինչպէս յայտնի է, դժուարին ըլլալուն համար։

— Պաղատէն եկած վերջին լուրերը՝ ժանտախտի հետզհետէ տկարանալը կը ծանուցանեն։

— Մայրաքաղաքիս գաղղիական հիւպատոսը երէկ մեռաւ։

— Մայրաքաղաքիս մէջ երկուշաբթի գիշեր հրդեհի երկու դէպք պատահեցան. առաջինը՝ Պէյքօզ, ուր փուռ մը այրեցաւ. երկրորդը՝ մեծ կղզին Վաբոր-իսկէլէսիի կողմերը քարուկիր տուն մը։

—

Քանի մը օր յառաջ Կէտիկփաշայի կողմերը մանկամարդ տիկին մը ծննդաբերութեան ատեն դայեակի մը անփորձութեան ու տգիտութեան զոհ դացեր, և տարաժամ գերեզման իջեր է, յանմիսիթար սուգ իւր ընտանեաց և ի մեծ ցաւ ամենայն ծանօթից և լսողաց։

Դայեակն այժմ աներևոյթ եղած է։ Անփորձ դայեակներու, բժիշկներու, փիրաբոյժներու և այլ այս կարգէ անձանց երեսէն հասարակութեան կրած ՀԼԱՍՆԵՐՆ ու զոհերը յաճախ կլսուին. սակայն դժբաղդաբար տակաւին ազգու տնօրինութիւն մը եղած չէ՝ այս ծայրագոյն անկարգութեան առաջքն առնելու համար. դեռ տուները կմտնեն այդպիսի անփորձ ու տգէտ անձինք, և իրենց խելքէն ու մտքէն խիստ վեր եղող խիստ ամենափափուկ գործողութեանց ձեռնամուխ կըլլան։ Բժշկական վերատեսչութիւնն հարկաւ այս վերջին աղետալի դէպքն ալ իմացած է, և կբարեհաճի փութալ աւելցունել հսկողութեան ու արգելման միջոցները։

—

Աւասիկ, գինեժողութեան նոր զոհ մ'ալ, զոր Իզմիրի համանուն տաճիկ թերթը հրատարակած է։

« Հրացանավաճառ Բոտոգօնաքի անուն մէկը քանի մ'օր յառաջ ընկերին հետ մերձակայ գիւղ մը երթալով՝ հոն կերուխումով մինչև երեկոյ կենալէն յետոյ, գլուխը սաստիկ տաքցած՝ ընկերէն կզատուի, և երկաթուղւոյ վրայէն գայթի գայթի գացած ատենը, շոգեկառքը կհասնի, և խեղճը չկրնալով դուրս ելնել ճամբէն՝ տակը կմնայ և չարաչար ճզմուելով կմեռնի։»

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ապրիլ 5

Քոնսոլիտէ			10– 6
Սօսիէթէ ժէնէրալի բաժինք	Անգ.	լիր.	2–30
Քրէտի »	»	Օսմ. »	1–30
Երկաթուղեաց՝ »		ֆր.	27–50
Թրամուէյ		Օսմ. լիր.	1–40
1865ի փոխառութիւն		ֆր.	55–
1865ի »		»	56–
1869ի »		»	50–
1872ի »			22–50

ԴՐԱՄՔ, Օսմ. լիրան 100 էն

Մէհիսիյէ	104–50	Ռուսիոյ բօլ	89–
Մէթալիք	114–	Գաղղ. լիրա	88–18
Պրինձ	170–	Անգղ. »	110–50
Թղթադրամ	164–20	Գրիմից	51–20

ՇԱՀԷՆՇԻՐ

ԿԱՄ

ԳԱՂԹԱԿԱՆ ՀԱՅԸ

Գրեց Ս. Դէր Սարգիսեանց

Արամեան մամլէն մաքուր և ընտիր տպագրութեամբ քանի մը ամիս յառաջ ի լոյս ընծայեալ այս գիրքը՝ երկրորդ անգամ ուշի ուշով կարդալով, որոշեցինք շա՛տ անգամ ծանուցանել, և մեր ազգին վիճակին վրայ ստոյգ տեղեկութիւն առնուլ՝ և խորհիլ ու գործել փափաքող ազգայնոց ուշադրութեան մատուցանել։

Գիրք մը՝ որոյ ամեն մէկ տողերը ուշի ուշով ընթերցման արժանի են։ Լի՛ է պատմական յիշատակներով, ծանր անցքերով ու արկածներով, որ անցած են ու կանցնին ցարդ մեր ազգայնոց գլխէն, աշխարհի ո՛ր կողմը որ գտնուած են և կգտնուին ցան և ցիր։ Լի՛ է ազգասիրական սրտարուղխ դիտողութեամբք ու խորհրդածութեամբք։ Սո՛յն գիրքը քա՛ջ կը նկարագրէ մեր կղերին վիճակն ի գաւառս, կը նկարագրէ՝ քրդին արարքներն ի Տաճկաստան, և ռուսական հնարքներն ի Ռուսաստան ի վնաս մեր կրօնին և ազգայնութեան։ Հա՛յ մը, որոյ երակներուն մէջ կաթիլ մի բուն հայկական արիւն կգտնուի, չկրնար անտարբեր գտնուիլ և չզգածուիլ, երբ կտեսնէ որ Շահէն անուն հայ-կատիպ երիտասարդ մը հաղարումէկ անձկութենէ և մինչև իսկ անձնասպանութեան փորձանքներէ յետոյ, օգնութեամբ Երկնից կենէ կհեռանայ Աղթամարայ վանական կեանքէն, և ընդ սուր և ընդ ջուր, և ընդ սար և ընդ ձոր հրաչալի երկայնմտութեամբ անցնելով, վերջապէս աշխարհիկ կենաց մէջ կը մտնէ, իւր առևանգեալ սիրելին ահագին լերանց ստորոտները գետահեղձ վիճակի մէջ ուր ուրեմն գտնելով։ Կարդա՛ ո՛վ Հա՛յ, և տե՛ս թէ այս Շահէնը վերջապէս ի՛նչպէս ինքզինքը կգտնէ ի Ռուսիա, ի՛նչ տխուր անցք և արկածք կպատահին անդանոր ևս Շահէնին, և հուսկ ապա ի՛նչպէս Սիպերիոյ սառնապարփակ խորերը կդատապարտուի։ Կարդա՛ և տե՛ս, թէ ի Ռուսիա ի՛նչ դժոխային դերեր կխաղայ Վաղինակ մը, ի՛նչպէս կմատնէ սա՛ զՇահէն զաղատարարն իւր, և թէ՝ ի՛նչպէս և ինքն վերջապէս իւր վասակային չարարարութեանց պատուհասը կընդունի,

Սոյն ամենօգտակար գործը կգտնուի՝ մայրաքաղաքիս բոլոր հայ գրավաճառաց քով։

Ս. ՂԵՒՈՆԴԵԱՆՑ

ԳԻՇԵՐՕԹԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ ՅԱՐՄԱՇ

Անցեալ օգոստ. ամսոյ 18րդ օրն վարժարանիս արձակուրդի օրերն աւարտեալ ըլլալով՝ աշակերտներն դարձած են և արդէն դասուց աւանդումն իսկ սկսուած է։

Այն ծնողաց կամ որբերու խնամակալ մարդասէր բարերարաց որ իրենց զաւակները կամ որբը վարժարանիս խնամոց յանձնել կուզեն կը յայտարարեմք թէ՝

Ս. Ղեւոնդեանց գիշերօթեայ վարժարանս յառաջադէմ վարժարաններու մեթոտով կանոնաւորեալ խիստ բարեկարգ վարժարան մ'է։

Կ. Պօլսէն և այլ քաղաքներէ՝ փոքր ինչ հեռաւորութիւնը թէև օտանց համար անհաճոյ թուի, սակայն կերպ մը բարիքէ ծնողաց աչքէն և զբօսալից վայրերէ հեռի անփոփ և անդրաղ մտօք միայն ուսման պարապելու կողմանէ։

Ուսմանց տեսակներուն ամենը, նկարչութեան ամեն ճիւղերը և լեզուներէն երեք միայն, հայերէն, գաղղիերէն և տաճկերէն կաւանդուին, բայց ոչ բնաւ վեր ի վերոյ կամ թերի։

Ամեն ուսանելի առարկայից համար, ընտիր և յաջողակ դասատուներ կան։

Աշակերտաց կեանքն և առողջութիւնը խնամով պահպանելու համար վարժարանս իւր մէջ յատկապէս մշտնջենաւոր բժիշկ կպահէ վկայեալ և յաջողակ, և բաւականաչափ դեղարան։

Աշակերտին տարեկան թոշակն է 52 լիրա օսմանեան որոյ մէջ են, երթևեկութեանց թղթատարութեանց և սովորական ագանելեաց ծախքէն զատ, ուրիշ բոլոր ծախքերը։

Արձակուրդի կամ պարապոյ օրերը բոլոր տարին միայն մէկ ամիս է և ո՛չ բնաւ աւելի։

Միշտ բաց է և բաց պիտի մնայ վարժարանս. որ ատեն որ ուզեն՝ ազատ են ծնողք կամ բարերարք իրենց զաւակները կամ սաները տալու։

Որոնք որ աշակերտ պիտի ղրկեն մեզ՝ պէտք է կամ Պօլիս Փունջ լրագրոյ արտօնատէր մեծ. Համբարձում էֆ. Ալաճաճեանի հետ տեսնուին (Ալաճա–համամ խանը խալիլ թիւ 19) և կամ հոս մեզի հետ թղթակցին։

1876 սեպտ. 1

Ի վանս Ղ. Ս. Աստուածածնի յԱրմաշ

Խորէն Եպիսկ. Վ. Արմաշու.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՏԻՏԻԵԱՆ

Պ. ՏԸ ԳԱՄՕՐ

ՀԵՂԻՆԱԿ ՕԳՈՒԱՎ ՑԻՕՑԷ

Թարգմանիչ Գ. Զէլինկիրեան

Սոյն ընտիր վէպին երկրորդ՝ այն է վերջին հատորը Պօլիս հասած ըլլալով, կը ծախուի Ս. Ղ. և Եղմաճեան գրատունը Եէնի–ճամի Զիլինկիրլէր ճատտէսի թիւ 2, և ուրիշ գրավաճառաց քով։ Գին 1 ֆրանք 50 սանդիմ։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՏԻՏԻԵԱՆ

ՄԱՐԻՕՆ ՏԸԼՕՐՄԻ ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔԸ

ԿԱՄ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԱՐՓԱՆՔ

Հեղինակ

Լիօնէլ դը Մէրքուր

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Դր. Զէլինկիրեան

Սոյն հրահանգիչ վէպին հայերէն թարգմանութեան Բ. Հատորը Պօլիս հասած ըլլալով, կը գտնուի Ս. Ղ. և Եղմաճեան գրատունը՝ Եէնի–ճամի Զիլինկիրլէր ճատտէսի թիւ 2, և ուրիշ գրավաճառաց քով։ Գին 2 ֆրանք.

Ամբողջ գործը չորս կամ հինգ հատորէ պիտի բաղկանայ։

Խոդէր Աբէ-Ելեան

Ե-բոպայէ արդէ Վէճանէն մէջ

Արմաշի վանական մամլէն ի լոյս ընծայեալ սոյն տետրակը՝ որ ամենայն ուշադրութեամբ ընթերցման արժանի է, մայրաքաղաքիս բոլոր հայ գրավաճառաց խանութները կծախուի ի գին 3 ղշ։

ԽՐԱՏՔ ԸՆՏԱՆԵԱՅ

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ – ՈՐԴԻՔ – ԸՆՏԱՆԻՔ

Արմաշու վարժարանին աշակերտ յարգոյ Յակոբոս Պ. Սրապեանի թարգմանած, և տեղւոյն տպարանէն ի լոյս ընծայուած Մէյնան Շալոնի նշանաւոր հեղինակութիւնն է, որ երեք կարևոր կէտերու՝ ամուսնութեան, որդւոց և ընտանեաց վրայ կխօսի, խիստ օգտակար է մեր ամեն կարգի ազգայնոց համար։

Կը ծախուի Պօլիս Զագմագճըլար փողոց թիւ 20, Յովսէփ Գալֆֆեանի գրատունը։ Գին 1 ֆրանգ։

Ի Լ Ա Ն
ՊԱՊԸ ՍԷՐԱՍՔԷՐԻ

Ասաքիրի շահանէ էրզաք անպարբնա հէման թէսլիմ օլունմաք եիւզերէ մուպայեա օլունաճագ օթուզ պին քըյէ կիրիա Հանեա սապօնընըն պահասը մաքպուզը վիրուտինտէ սիմ մէճիտիյէ եիկիրմի ղրուշա, վէ մէճիտիյէ վերիլմէտիյի հալտէ՝ փիյացա ֆիյաթըյըլա պիլէհսապ ֆարքըյըլա պերապէր քայիմէ օլարագ պերվէճճի փէշին նիզամիյէ խազինէսինտէն վերիլմէք շարթըյըլա պէհէր քըյէսի իւչ ղրուշ օթուզ փարայա օլարագ թալիպի էօհտէսինտէ օլուպ՝ նիսանը բումինին եէտինճի փէնճէնպիհ կիւնիւ դարարը դաթիսի վերիլէճէյինտէն՝ իթա իթմէյէ թալիպ օլանլարըն եէվմը մեղքիւրտէ Տարը շուրայի ասքէրիյէ կէլմէլէրի։

4 Նիսան 1877

Պապը Սէրասքէրի

—

Պէյքօղ տէպաղհանէսինէ լուղումի օլան եիկիրմի պին քըյէ Իզմիր քէօսէլէսի Իզմիրտէ մէմուրընա թէսլիմ քըլընմաք վէ պահասը հինի թէսլիմինտէ սիմ մէճիտիյէ եիկիրմի ղրուշա վէ սիմ մէճիտիյէ վերիլմէտիյի հալտէ փիյացա ֆիյաթըյըլա պիլէհսապ ֆարդըյըլա պերապէր քայիմէ օլարագ պերվէճճի տէպաղխանէի մեղքիւր իչին Այտըն էմվալինտէն վերիլմիշ օլան կէօն հալալէսինտէն օլարաք Իզմիրտէ պուլունան մէմուր թարաֆընտան իթա օլունմաք շարթըյըլա, պէհէր քըյէսի օն սէքիզ ղրուշա օլարաք թալիպի էօհտէսինտէ օլուպ՝ նիսանը բումինին ալթընճը չէհարշէնպիհ կիւնիւ քարարը քաթիսի վերիլէճէյինտէն՝ իթա իթմէյէ թալիպ օլանլարըն եէվմի մեղքիւրտէ Տարը շուրայի ասքէրիյէ կէլմէլէրի։

4 Նիսան 1877

Պապը Սէրասքէրի

—

Ասաքիրի շահանէ էլպիսէ անպարբնա միպայեա օլունաճագ էլլի պին ատէտ ֆէս պիր մահէ գատար թէսլիմ օլունմագ, վէ պէհէրը մագպուզ սէնէտի թարիխինտէն իթիպարէն օթուզ պիրեր կիւնլիւ իւչ թագսիթ իլէ սիմ մէճիտիյէ եիկիրմի ղրուրուշա, վէ սիմ մէճիտիյէ վերիլմէզսէ՝ փիասա ֆիյաթը ըլա պիլ հիսապ ֆերդի իլէ պերապէր դայիմէ օլարագ նիզամիյէ խազինէսինտէն վերիլմէք շարթը ըլա պէհէր ատէտի եէտի պըչէդ ղրուրուշա թալիպի էօհտէսինտէ օլուպ՝ նիսանը բումինին օն պիրինճի պաղար իրթէսի կիւնի գարարը դաթիսի վերիլէճէյինտէն՝ իթա իթմէյէ թալիպ օլանլէրին եէվմի մեղքիւրտէ Տարը-Շուրայի ասքէրիյէ կէլմէլէրի։

5 Նիսան 1877

Պապը Սէրասքէրի

—

Եումշագ Զաղրա վէ Ֆիլիպէ պուղտայը

Օն պին քիլէ, պէհէր քիլէսի օթուզ տէօրթ ղրուրուշ

Օն պին քիլէ, պէհէր քիլէսի օթուզ իքի պըչէդ ղրուշ։

Եէկիրմի պին քիլէ

Նանը ազիզ իտարէսի իչուն միւպայեա օլունաճագ պալատէ մուհարրիր էլմըգտար պուղտայ հէման թէսլիմ գըլընմագ, վէ եէվմիյէ թէսլիմ օլունաճագ պուղտայը պէհասը իրթէսի կիւնիւ սիմ մէճիտիյէ եէկիրմի ղուրուշա օլարագ նագտէն իտարէի մեղքիւրտէն իթա գըլընմագ շարթը իլէ վէ ֆիյաթը մուրագդամասըյլա թալիպի էօհտէսինտէ օլուպ՝ նիսանը բումինին եէտինճի փէնճէնպիհ կիւնիւ սաաթ սէքիզտէ դարարը գաթիսի վերիլէճէյինտէն՝ իթա իթմէյէ թալիպ օլանլէրին, եէվմի մեղքիւրտէ տարը-շուրայի ասքէրիյէ կէլմէլէրի։

5 Նիսան 1877

Պապը Սէրասքէրի

—

Նանը ազիզ իտարէսի տէկիրմէնլէրի հասըլաթընտան սաթըլաճագ օլան իքի եիւզ պին գըյէ քէփէկին պէհասը եիւզլիւք գայիմէ եիւզ ղուրուշա օլարագ փէշինէն ախզ գըլընմագ շարթը իլէ պէհէր գըյէսի օն պէշ փարայա թալիպի էօհտէսինտէ օլուպ նիսանը բումինին եէտինճի փէնչէնպիհ կիւնիւ դարարը գաթիսի վերիլէրէք ֆիրուխթ օլունաճաղընտան իշթիրասքնա թալիպ օլանլարըն եէվմը մեղքիւրտէ տարը շուրայի ասքէրիյէ կէլմէլէրի։

1877 Մարտ 31

Պապը Սէրասքէրի

—

Պօլիս, կամրջին գլուխը, Վալիտէ-Սուլթանի նորաշէն խանութներէն թիւ 4, Մատթէոսեանց խանութը, տաճկերէն, հայերէն և դաղղիերէն ամեն տեսակ հին և նոր հրատարակեալ գրքեր, դպրոցական և այլն, կգտնուին գոհացուցիչ գնով։

ԱՌ ԱՐԵԳԱԿՆ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԲԺՇՆԱԿԱՆ ԵՒ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ

Փ. Վ. Ծանցի տունը յանձնարարուի բիւնցերը ալ կրնցուցի ուրս դրեկ լաս. Եր դարեակ բերել տալու։

ՄԵԾ ՏՈՒՆ ԴԵՂԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ
ԵՒ ԴԵՂՕՐԷԻՑ
Վ. ԾԱՆՆԻ
Բերա Մեծ փողոց Ադամամի թիւ 77
ԵՒ
Կ. Պօլիս Կամուրջի հրապարակը թիւ 1—2

Եւրոպիոյ առաջին գործարանաց հետ յարաբերութեամբ կապուած, և իւր դեղորէից ընտրութեամբն և գնոց չափաւորութեամբ հրաշակուած։

Միակ մթերանոց անուանի Հ. Նէսթլէ քիմիագէտին շինած Ֆն լաֆնէն, որոքիրիկ ալիւր տղայոց, տկար կազմ ունեցող և հիւանդութենէ ապաքինելոց միակ սննդարար ուտելիքէն համայն Եւրոպիոյ մէջ ընդունուած և ամեն գլխաւոր բժշկաց հաւանութիւնն ստացած։

Հոն կը գտնուի նաև.

Քոնֆիտ (մատակի խմորեալ կաթ) որ մեծ համբաւ ունի Եւրոպիոյ մէջ և շատ կը փնտրուի։

Սէլֆոն ալ Քինին, զուտ և մաքուր, Բէլթիէ, Տիւպօսք, ժոպոթ և Էվանս Լէղէ ճարտար քիմիագէտներէն պատրաստուած։

Զկան իւղ, զուտ, Քրիսթիանայի Բէթէր Մէլլերի գործարանէն ելած։

Եղեբդէ (հինտիպա) խահուէ, Լուտվիկսպուրկի Հ. Ֆրանք գործարանէն ելած ստամոքսի ուժ տուող և ախորժակ բացող՝, որ հասարակ խահուէի հետ խառնելով՝ գինը մեծապէս կիջեցնէ՝ առանց համն ու հոտը փոխելու։

Արոմատիկան սառոյց ամեն ժամու մէջ։

Տէ-ժէնէ Ջոբ, մազերու անվրիպելի ներկ։

PILULES HOLLOWAY
ԴԵՂԱՀԱՏՔ ՀՈԼԼՕՈՒԷԻ

Լեարդի, ստամոքսի, և աղիքներու ամեն տեսակ անկարգութեանց համար խիստ ընտիր է սոյն դեղահատը, նաև ջղային տկարութեան, ուժաթափութեան և տխրութեան համար. կը ջնջէ և անհետ կընէ ամեն տեսակ անչափաւորութեանց հետքերը։ Սրտի և երիկամանց վրայ օգտակար ազդեցութիւն մ'ունի. արիւնը մաքրելով նոցա խանգարեալ վիճակը կը կանոնաւորէ, և գրգռելով կենսական գործարանները կը զօրացնէ։ Իւր դեղական մեծ ազդեցութեամբը սրտախառնութիւն, կուծուութիւն, մաղձային հիւանդութիւններ, որովայնի մէջ լեցուած կաղեր, գլխի ցաւեր կը վանէ. մարսողութիւնը կը չափաւորի, և մարմինը մաքրուելով բոլոր այն աղտեղութիւններէ՝ որ շատ անգամ զանազան հիւանդութեանց սկզբնապատճառ կըլլան, առողջ, ուժեղ, և բնական դիրքը կզգենու։

ONGUENT HOLLOWAY
ՍՊԵՂԱՆԻ ՀՈԼԼՕՈՒԷԻ

Մորթային հիւանդութիւնք և վերք բուժելու մասին ունեցած պալատական յատկութեանցը չհաւասարիր բնաւ ուրիշ դեղ մը. հին կամ նոր թունաւոր վերքեր, ուռեցք, քաղցկեղ (չիրիփէնչէ), սրունից և ստեանց վերքեր կամ բոլորովին կանցնին և կամ կլաւանան. օգտակար է նաև հարբսիսի, հաղի, սրտի բարտիման, մանաւանդ օդացաւ (եէլ) ըսուած հիւանդութեան։ Իւր կազդուրիչ և զօրաւոր ազդեցութեամբը խոյլ (սըրաճա) հիւանդութեան ապականիչ զօրութիւնը ի՛նչ աստիճան որ ըլլայ՝ կը դիմադրաւէ։

Այս դեղերուն գործածութեան եղանակը նշանակուած է իւրաքանչիւր տուփի վրայ, որ կը գտնուի ամեն դեղավաճառներու քով, և մասնաւորապէս Պահէք-գափու Թաշ խանի կողմերը Պ. Գասապեանի դեղարանը՝ Նօ. 7՝ կը ծախուի։

Աւելի առնել ուզողը կը հրաւիրուի առ հեղինակն տոքթոր Հոլլօուէ ի Լոնտոն Օքսֆորտ փողոց թիւ 555։

ՊԱՏՄԱՆԵՔ ՓՈՒՆՁԻ

1.—Փունջը ԶՈՐԵՔՇԱԲԹԻ և ՇԱԲԱԹ օրերը կը հրատարակուի։

2.—Տարեկան բաժանորդագինն է միայն չորս արծաթ մէճիտ՝ կանխիկ վճարելի թէ՛ մայրաքաղաքիս և իւր արուարձանաց և թէ գաւառաց համար։

3.—Վեց և երեք ամսոց համար ալ բաժանորդ կընդունուի։

4.—Տեղական ու գաւառական թղթատարութեան ծախքը խմբագրութիւնը պիտի վճարէ։

5.—Հատը 40 փարայ է, և կը գտնուի ամեն Հայ գրավաճառաց խանութները և ձեռքէ ծախողներու քով։

6.—Ծանուցման տողը 3 ղրուշ է մէկ անգամի համար։ Աւելի աժան կըլլայ աւելի անգամներու համար։

7.—Խմբագրութեան վերաբերեալ որ և է գիր ուղղելի առ Տնօրէն-Տէր Հ. Ս. Ալամճեան, Կ. Պոլիս Ալամճա-Համամ Խալիլ խան միջին յարկ թիւ 19։

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԷՐ
Հ. Ս. ԱԼԱՄՃԱՆ

ՏՊԱԳՐ. Ս. Ղ. ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐ
Բիզա փաղա խան թիւ 3